

Տ. ՊՍԱԿ ԱՐՔԵՊՍ. ԹՈՒՄԱՅԵԱՆ

(1912 - 1981)

29 Յունիս, Երկուշաբթի առաւօտ, Լոնտոնի իր բնակարանին մէջ անակնկալօրէն վախճանեցաւ Հայց. Եկեղեցւոյ բարձրաստիճան պաշտօնեաներէն Գերշ. Տ. Պսակ Արքեպս. Թումայեանը, 69 տարեկան հասակին:

Հանգուցեալ Սրբազանը ծնած է Պարտիզակ, 9 Յունիս 1912ին: Տարագրութեան օրերուն ընտանեօր կ'աքսորուին Գոնիա: Զինադադարէն ետք Պարտիզակ դառնալուն, աւերուած կը գտնեն ամէն ինչ եւ կը կորսնցնեն իրենց հայրը: Փոքրիկն Բաբգէն — այդ էր աւագանի իր անունը — իր երկու եղբայրներուն հետ կը մտնէ Օրթագիւղի եւ ապա Նտիգուլէի որբանոցները: Քէմալական շարժման շրջանին կը փոխադրուի Յունաստան, Լաթրաքիի եւ ապա Սէրա կղզիին որբանոցները: Հոն է որ իր մէջ սէր մը կ'արթննայ Եկեղեցական երաժշտութեան հանդէպ: Իր այդ բնատուր ձիրքին — ունէր աղու եւ գրաւիչ ձայն — համար 1925ին կը ղրկուի Երուսաղէմ, ուր հինգ տարիներ կ'աշակետի Ս. Սթոռոյս ժառանգ. Վարժարանին: 1930ին Սարկաւազ կը ձեռնադրուի Տեղապահ Մեսրոպ Սրբազանէն, իսկ 1934ին, Ընծայարանի քառամեայ շրջանը աւարտելէ ետք, արեւոյ՝ Երանաշնորհ Տ. Թորգոմ Պատրիարքէն:

Մինչեւ 1943, Աղեքսանդրիոյ Առաջն. Փոխանորդ իր նշանակուիլը, Հայր Պսակ Վանքէն ներս վարած է կարգ մը պաշտօններ, ինչպէ՛ս՝ Ժամասաց եւ դպրապետ Մայր Տաճարի, Երաժշտութեան եւ այլ նիւթերու դասատու՝ Ժառանգ. Վարժարանէն ներս, Աւագ Թարգման (1939-41) եւ հանդերձապետ: Ստորագրած է նաեւ երաժշտադիտական հմտաւից յօդուածներ «Սինոն» ամսագրի մէջ:

1949ի վերջերը կը ստանձնէ Լոնտոնի հայոց հոգեւոր հովուութիւնը, իսկ 1955ին Եպիսկոպոս կը ձեռնադրուի նորընտիր Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսէն եւ կը նշանակուի Կաթողիկոսական Պատուիրակ Անգլիոյ Հայոց: Իր այդ պաշտօնը կը վարէ մինչեւ 1968, իսկ Հոգեւոր Տեսուչի պաշտօնը՝ մինչեւ 1973: Անկէ ետք Սրբազանը ապրեցաւ մեկուսացած կեանք մը, պատարագելով Լոնտոնի Ս. Պետրոս Եկեղեցւոյ մէջ:

Հանգուցեալ Սրբազանը այդ շրջանին երկիցս այցելեց Ս. Աթոռ: Նախ 1975ին, մաս կազմելով Վեհափառ Հայրապետի շքախումբին, եւ ապա անցեալ Օգոստոսին, իր մասնակցութիւնը բերելու Սաղիմահայ Հոգեւորականաց Համագումարին:

Հանգուցեալ Տ. Պսակ Արքեպս. երկար տարիներ եղած է Հայց. Եկեղեցւոյ ներկայացուցիչը Անկլիքան քոյր Եկեղեցւոյ մօտ: Իբր այդ, իր մարդամօտ բնաւորութեան շնորհիւ, շահած է լայն համակրութիւնը Անկլիքան Եկեղեցւոյ հոգեւորական ղէմբերու:

Հանգուցեալի յուղարկաւորութեան, կատարուած Ս. Պետրոս Եկեղեցւոյ մէջ հոծ բազմութեան մը ներկայութեան, նախազանգեց Եւրոպայի Հայոց Կաթող. Պատուիրակ եւ Փարիզի Առաջնորդ Գերշ. Տ. Սերոբէ Արքեպս. Մանուկեանը, իր հետ ունենալով Անգլիոյ Հայոց Կաթող. Պատուիրակ եւ Լոնտոնի Առաջնորդ Գերշ. Տ. Ներսէս Եպս. Պողոսապետը, Փարիզէն՝ Գերշ. Տ. Գիւտ Եպս. Նազգաշեանը եւ այլ հոգեւորականներ:

Տ. Պսակ Սրբազանի անժամանակ մահով միւր Եկեղեցին կը կորսնցնէ բազմադիւն եւ պարտաճանաչ՝ այնչեւ մեր շարականագիտութեան ու հոգեւոր երաժշտութեան խորագէտ հմուտ պաշտօնեայ մը: — Հանգիստ իր բարի հոգիին: